ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆՈՍՏՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների Կառավարությունները,
հիմնվելով Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում միջպետական գիտատեխնիկական համագործակցության մասին Համաձայնագրի վրա,
ընդունելով գիտական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման եւ նրանց որակավորման փաստաթղթերի նոստրիֆիկացիայի բնագավառում համագործակցությանն աջակցելու անհրաժեշտությունը, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 1

Համաձայնագրի մասնակից պետությունները միմյանց միջեւ համաձայնեցնում են բարձրագույն կրթությամբ մասնագետների, գիտական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման եւ որակավորման ազգային հայեցակարգերը եւ պահանջները:

ՀՈԴՎԱԾ 2

Համաձայնագրի շրջանակներում մասնակից պետությունները.
իրականացնում են միջպետական ծրագրերի (հիմնարար հետազոտություններ, գիտատեխնիկական, նոր տեխնոլոգիաների զարգացման եւ յուրացման, միջպետական այլ ծրագրեր) կադրային ապահովումը,
իրականացնում են բարձրագույն գիտական որակավորման կադրերի ամբողջական պատրաստումը եւ գիտաշխատողների ստաժավորման անցկացումը,
մշակում, ներդնում եւ կատարելագործում են գիտական եւ գիտամանկավարժական կադրերի որակավորման փաստաթղթերի նոստրիֆիկացիայի համակարգը:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի շրջանակներում պետությունների փոխհամագործակցության համակարգման կարգը որոշվում է Միջպետական գիտատեխնիկական խորհրդի կողմից (ՄԳՏԽ):

ԲԱԺԻՆ 2
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀՈԴՎԱԾ 4

Համաձայնագրի մասնակից պետությունները պարտավորվում են.
ստեղծել իրավական, տնտեսական եւ կազմակերպչական պայմաններ, որոնք Համաձայնագրի բոլոր մասնակից պետությունների համար կերաշխավորեն հավասար իրավունքներ եւ պատասխանատվություն գիտական ու գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում,
ապահովել պայմաններ, խտրականությունից զերծ հիմքերով, մյուս պետությունների անձանց ասպիրանտուրա եւ դոկտորանտուրա ընդունվելու համար:

ՀՈԴՎԱԾ 5

Փորձնակներին, ասպիրանտներին, դոկտորներին, գիտաշխատողներին սովորելու եւ որակավորման բարձրացման համար մի պետությունից մյուսը գործուղելու ժամանակ

հնարավոր է արժութային համարժեք փոխանակում՝ այդ պետությունների միջեւ գիտատեխնիկական համագործակցության մասին երկկողմ պայմանագրերի հիման վրա:

ԲԱԺԻՆ 3
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍՏԱԺԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ՝ Ի ՇԱՀ ԱՅԼ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՀՈԴՎԱԾ 6

Համաձայնագրի մասնակից պետություններն անցկացնում են բարձրագույն գիտական որակավորման կադրերի պատրաստում՝ ի շահ այլ մասնակից պետությունների, այն մասնագիտությունների ցանկով, որոնք տվյալ պետության համար ճանաչվում են հիմնարար:

Հիմնարար մասնագիտությունները, որոնց վերաբերյալ անցկացվում է պատրաստում՝ ի շահ մյուս պետությունների, հաստատվում են ՄԳՏԽ-ի նիստում:

ՀՈԴՎԱԾ 7

Բարձրագույն գիտական որակավորման կադրերի նպատակային պատրաստումն ու գիտաշխատողների կողմից ստաժավորման անցկացումը ի շահ Համաձայնագրի այլ մասնակից պետությունների, իրականացվում է, որպես կանոն, միջպետական ծրագրերին համապատասխան:

Գիտնականների կողմից ստաժավորման անցկացումը ի շահ այլ մասնակից պետությունների իրականացվում է երկկողմ հիմքի վրա, ուղարկող եւ ընդունող Կողմերի իրավունքների եւ պարտականությունների սահմանմամբ:

ԲԱԺԻՆ 4
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆՈՍՏՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾ 8

Համաձայնագրի մասնակից պետությունները ստանձնում են պարտավորություններ կապված գիտական եւ գիտամանկավարժական կադրերի որակավորման մասին փաստաթղթերի փոխադարձ նոստրիֆիկացիայի հետ:

ՀՈԴՎԱԾ 9

Համաձայնագրի մասնակից պետությունները ճանաչում են ԽՍՀՄ նախարարների խորհրդին կից Բարձրագույն որակավորման հանձնաժողովի, ինչպես նաեւ այլ նախարարությունների եւ գերատեսչությունների կողմից անցկացված գիտական եւ գիտամանկավարժական կադրերի որակավորման արդյունքների իսկությունը:

Ըստ Համաձայնագրի մասնակից պետությունների կողմից համաձայնեցված մասնագիտությունների ցանկի, դրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի ներկայացնելու պահանջներ՝ գիտական եւ գիտամանկավարժական կադրերի որակավորման հաստատման մասին իր տարածքում գործող կանոններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 10

Համաձայնագրի մասնակից պետությունները երաշխավորում են նախկին ԽՍՀՄ-ի գիտական աստիճաններ եւ կոչումներ ունեցող քաղաքացիների իրավունքը՝ անցնելու վերագրանցում, յուրաքանչյուր պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 11

Գիտական եւ գիտամանկավարժական կադրերի որակավորման մասին փաստաթղթերի նոստրիֆիկացիայի կարգն ու պայմանները որոշվում են գիտական եւ գիտամանկավարժական կադրերի ատեստացիայի ընդունումից հետո:

ԲԱԺԻՆ 5
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀՈԴՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը կնքվում է 5 տարի ժամկետով եւ ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Դրա գործողությունը կարող է երկարաձգվել մասնակից պետությունների փոխադարձ համաձայնությամբ:

ՀՈԴՎԱԾ 13

Համաձայնագիրը բաց է այլ պետությունների միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 14

Մասնակցությունը Համաձայնագրին չի սահմանափակում այն ստորագրած պետությունների իրավունքը մասնակցելու միջպետական համագործակցության ցանկացած այլ երկկողմ ձեւերում, գիտական եւ գիտամանկավարժական կադրերի պատրաստման եւ ատեստավորման բնագավառում:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1992 թվականի մարտի 13-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության Կառավարության արխիվում, որը դրա հաստատված պատճենը կուղարկի տվյալ Համաձայնագիրը ստորագրած պետություններին:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1992 թվականի մարտի 13-ից: